«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ընտանիքի հոգեբանություն և ՏՀՏ-ների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանության զարգացման գործում:

Առարկան՝ Ֆիզիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարյան Արմինե

Ուսումնական հաստատություն՝ Ա.Չեխովի անվ. թիվ 55 հիմնական դպրոց:

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

ԳԼՈՒԽ I. Ընտանեկան դաստիարակության բովանդակությունը ժամանակակից ընտանիքում

1.1. Ընտանեկան դաստիարակության խնդիրները. ընտանիքի դաստիարակչական և հոգեբանամանկավարժական մեթոդները _____ 6

1.2. Ընտանեկան դաստիարակության ոճերն ու մոդելները _____ 10

ԳԼՈՒԽ II. Ժամանակակից ընտանիքներում ծագող հիմնախնդիրները

2.1. Ընտանեկան դաստիարակության ոլորտում ծագող դժվարությունները _____ 13

2.2. ՏՀՏ-ների ազդեցությունը, երեխաների անձի ձևավորման վրա.Հետազոտական աշխատանք ՏՀՏ-ների դրական և բացասական ազդեցության վերաբերյալ _____ 17

Եզրակացություն _____ 20

Օգտագործված գրականության ցանկ և հղումներ _____ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի կարևորությունը և արդիականությունը: Մարդու անձի զարգացման ու ձևավորման մեջ կարևորագույն գործոններից մեկը՝ դաստիարակությունն է: Այն իրականացնելու համար հասարակությունն օգտագործում է իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցները, ինչպես օրինակ, ուսումնական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, ընտանիքը, արվեստը, գրականությունը, լրատվական միջոցները, մշակույթը, ժամանակակից տեխնոլոգիաները, այսօր նաև՝ համացանցը և այլն: Երեխայի դաստիարակության գործընթացը բավական երկար պրոցես է, որ տևում է մինչեւ նրա հասուն տարիքին հասնելը:

Ցավոք վերջին տարիների որակական փոփոխություններն իրենց բացասական ազեցությունն ունեցան այս խնդրում: Բացի այն, որ շուկայական հարաբերությունները խորապես ազդեցին «ընտանիք» սոցիալական ինստիտուտի կառուցվածքի, ձևի, գործաույթնրի և դերի, միջանձնային փոխհարաբերությունների վրա, նկատելի փոփոխություններ են կրել նաև ընտանիք- հասարակություն հարաբերությունները:

Խառնաշփոթ առաջացավ հասարակության արժեքային համակարգում, անցյալի կտրուկ հրաժարումը դեռևս երաշխիք չէր իրական առաջընթացի: Ճիշտ է, եղան նաև մի շարք ձեռքներումներ՝ խոսքի ազատություն, անկախություն, արտաքին քաղաքական հարաբերություններում ինքնուրույնության և այլն, սակայն դրանց կողքին ի հայտ եկան սոցիալական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ նոր հասարակական հարաբերությունների նկատմամբ անպատրաստվածությունը, պատերազմական գործողությունները, գործազրկությունը, աղքատությունը, կոռուպցիան, արտագաղթը, որոնք հանգեցրին իրավիճակի էլ ավելի բարդացմանը: Բնականաբար, ընտանիքն այս ամենից զերծ մնալ չէր կարող, որը պետության և հասարակության առջև ծառացած խնդիրներից ու դժվարություններից առավելապես տուժեց: Այս ամենի հետևանքով ազգի հիմքը հանդիսացող ավանդական ընտանիքը, ուր դաստիարակվում և կրթվում է նոր սերունդը կրեց կառուցվածքային և որակական փոփոխություններ: Այլ կերպ ասած՝ անծանոթ երևույթների ի հայտ գալը հանգեցրեցին նրան, որ ընտանիքը դարձավ սոցիալապես ամենախոցելին: Վերոհիշյալ երևույթները հանգեցրին նրան, որ շատ ծնողներ իրենց ընտանիքի կենսագործունեությունն ապահովելու, գոյատևման նորմալ պայմաններ ստեղծելու համար կամ սկսեցին աշխատել ոչ նորմալ աշխատանքային ռեժիմով, կամ բռնեցին արտագաղթի ուղղին, կամ էլ համալրեցին գործազուրկների բանակը:[7]

Աշխատանքի նպատակն է հասկանալ թե ի՞նչ դժվարությունների ենք հանդիպում այսօր երեխաների դաստիարակության գործը կազմակերպելիս և որո՞նք են ժամանակակից երեխաների դաստիարակության հիմնախնդիրները:

Նպատակից են բխում հետևյալ խնդիրները՝

- դիտարկել ժամանակակից երեխաների դաստիարակության հրիմնախնդիրները
- դիտարկել դաստիարակության բովանդակությունը՝ ֆիզիկական, մտավո գեղագիտական և աշխատանքային ուղղությունները
- դիտարկել ՏՀՏ-ների դրական և բացասական ազդեցությունները կրթության
- երեխաների դաստիարակության գործում:

Աշխատանքի իրականացման ժամանակ օգտագործվել են հարցման, զրույցի և մասնագիտական գրականության օգտագործման մեթոդները:

Աշխատանքը բաղկացած է երկու գլուխներից և չորս ենթագլուխներից, ներածություն, եզրակացություն բաժիններից և օգտագործված գրականության ցանկից, որոնք միասին կազմում են 21 համակարգչային էջ:

Կուրսային աշխատանքի ներածություն բաժնում սահմանված են թեմայի կարևորությունը, արդիականությունը, նպատակները և աշխատանքի կառուցվածքը:

Առաջին գլուխն ուսումնասիրում է ընտանեկան դաստիարակության խնդիրները, նպատակները, ընտանիքի դաստիարակչական և հոգեբանամանկավարժական մեթոդները:

Աշխատանքի երկրորդ բաժնում ներկայացված են մանկության ժամանակակից խնդիրներից թերևս ամենակարևորը՝ ժամանակակից երեխաների դաստիարակության

հիմնախնդիրները և ՏՀՏ-ների ազդեցությունը, երեխաների անձի ձևավորման վրա, այն նաև ներառում է հետազոտական աշխատանք վերը նշված թեմայի վերաբերյալ:

Կուրսային աշխատանքը ավարտվում է եզրակացությունով և թեմայի ամփոփմամբ, որոնք ներառված են եզրակացություն բաժնում:

ԳԼՈՒԽ Ի. Ընտանեկան դաստիարակության բովանդակությունը ժամանակակից ընտանիքում

1.1. Ընտանեկան դաստիարակության խնդիրները.ընտանիքի դաստիարակչական և հոգեբանամանկավարժական մեթոդները

Ընտանիքը մարդու կյանքում սոցիալական առաջին հանրությունն է, որի շնորհիվ նա հաղորդակցվում է մշակութային արժեքներին, յուրացնում է սոցիալական դերեր, ձեռք է բերում հասարակական վարքի փորձ:

Ընտանիքի հիմնախնդիրներն ուսումնասիրվում են տնտեսագիտության, իրավագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, բժշկագիտության, փիլիսոփայության, ազգագրության, մանկավարժության և այլ գիտությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրն ուսումնասիրում է ընտանիքի ձևավորման, զարգացման և կայացման տարբեր հարցեր:

Ընտանիքը հասարակության կազմակերպման հիմքն է, հասարակական կյանքի կարևոր բաղադրիչը, հասարակության վերարտադրման իրավաբանորեն ճանաչված, բարոյապես արժևորված և հոգեբանորեն կայացած ձևը:

Ընտանիքում են յուրացվում կոլեկտիվ կյանքով ապրելու կանոնները, գիտակցվում են իրավունքներն ու պարտականությունները, հաղորդակցման, կենցաղը կազմակերպելու կարողությունները: Ընտանիքի հեռանկարային նպատակը պատասխանատվության և հարգանքի ձևավորումն է ավագ անդամների կամ մեծերի նկատմամբ: Ընտանեկան մթնոլորտում են երեխաները ծանոթանում մարդկային փոխհարաբերություններին, ձեռք են բերում հաղորդակցման մշակույթ, անձնային որակներ, բարոյական չափանիշներ, որում մեծ նշանակություն ունի ծնողների բարոյական կերպարը: Ընտանիքը տվյալ էթնոսի մենթալիտետի, բարոյական նկարագրի, ավանդույթների, սովորույթների արտահայտիչն ու փոխանցողն է: Ընտանեկան դաստիարակությունը բարդ համակարգ է, որի վրա վճռորոշ ազդեցություն ունեն ժառանգականությունը, երեխաների և ծնողների կենսաբանական առանձնահատկությունները, նյութական-տնտեսական ապահովվածությունը, հասարակական և սոցիալական դիրքը, ընտանիքի անդամների թիվը, կենսամիջավայրը, երեխայի նկատմամբ եղած վերաբերմունքը՝ սկսած նախածննդյան շրջանից: [Самыгин С. И., Столяренко Л.Д. 2012, 440-443]

Ընտանեկան դաստիարակության բովանդակությունն են կազմում հետևյալ մեզ ծանոթ ուղղությունները՝ ֆիզիկական, մտավոր, գեղագիտական և աշխատանքային: Դրանց լրացնում են էկոլոգիական, տնտեսագիտական, քաղաքացիական, անձի սեռական կրթության ուղղությունները:

Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունն ապահովում են ներընտանեկան տարբեր հարցերի քննարկումներն ու որոշումների համատեղ ընդունումը, վստահությունը, ապրումակցումը, սերը և գթասրտությունը, երեխայի վարքն ու արարքներն ըստ արժանվույն գնահատումը, վերահսկողությունը, քաջալերանքը, խրախուսումը, ընտանեկան ավանդույթների պահպանումն ու փոխանցումը, փոխըմբռնումը, փոխօգնությունը: Մանկավարժական գիտությունը դիտարկում է ընտանիքի դաստիարակչական գործառույթը ծնողների և երեխաների փոխհարաբերությունների, դաստիարակչական նպատակների ու միջոցների, նրանց իրավունքների և պարտականությունների տեսանկյունից: Այն փորձում է ի հայտ բերել ընտանեկան դաստիարակության հնարավորությունները, նրա դաստիարակչական ներուժը, զարգացնել ու կատարելագործել դրանք, բացահայտել բացթողումներն ու գտնել դրանց հաղթահարման ուղիները: Հոգեբանամանկավարժական գրականության մեջ առանձնացվում են ընտանիքի վերարտադրողական (հասարակության կենսաբանական վերարտադրություն), տնտեսական-կենցաղային, երեխաների առաջնային սոցիալականացման, հոգևոր շփման, սոցիալական կարգավիճակի, հուզական, ծնողական (երեխաների ծննդի, դաստիարակության, խնամքի) և այլ գործառույթներ: Դաստիարակչական գործառույթի իրականացման ընթացքում առաջին հերթին ապահովվում են երեխայի առաջնային սոցիալականացումը և անձնային որակների ձևավորումը: Հաշվի առնելով ընտանիքի դաստիարակչական գործառույթը և հոգեբանամանկավարժական գործառույթը ՝ վերարտադրողականը եզրակացնենք՝

- ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա հսկայական է: Տարիքի հետ այդ ազդեցությունը նվազում է, սակայն երբեք չի դադարում
- ընտանիքում ձևավորվում են որակներ, որոնք մեկ այլ պայմաններում չեն կարող ձևավորվել

-

ընտանիքն իրականացնում է երեխայի սոցիալականացումը: Ընտանիքից դուրս են գալիս հասարակության անդամներ՝ ինչպիսին ընտանիքն է, այնպիսին էլ հասարակությունն է

- ընտանիքն ապահովում է ավանդույթների հաջորդականություն
-

ընտանիքի կարևորագույն սոցիալական գործառույթն է քաղաքացու, հայրենասերի, ապագա ընտանիքի անդամի, իրավապաշտ քաղաքացու դաստիարակությունը:

Ժամանակակից ընտանիքի խնդիրներն են՝

- նյութական և բարոյահոգեբանական պայմաններ ստեղծել երեխայի աճի ու զարգացման համար,
- հոգեբանական և սոցիալական պաշտպանության մեխանիզմներ ապահովել երեխաների համար,
- երեխաների մեջ ձևավորել ինքնասպասարկման, ինքնակառավարման, առողջ ապրելակերպի կանոնների յուրացման, աշխատանքային գործունեության հմտություններ,
- հարգանք ձևավորել սեփական անձի, մերձավորների և հասարակության անդամների նկատմամբ:

Ընտանեկան դաստիարակության հիմնական սկզբունքներն են՝

- մարդասիրությունն ու հոգատարությունը երեխայի նկատմամբ,
- երեխայի ներգրավումը ընտանիքի կենսագործունեության մեջ՝ որպես լիիրավ անդամի. երեխան պետք է իրեն զգա որպես ընտանիքի մի մասնիկը, պատասխանատվություն զգա նրա անդամների հանդեպ,
- վստահությունը երեխայի հանդեպ, նրա հնարավորությունների լիարժեք հաշվառումը, հավատը ուժերի նկատմամբ,
- թափանցիկությունը ներընտանեկան հարաբերություններում, լավատեսությունը, անաչառ, անկողմնակալ վերաբերմունքը բոլոր երեխաների նկատմամբ,
- չափավորությունը, այսինքն՝ չպետք է նրա բոլոր պահանջները, քմահաճույքները բավարարել,

- ծնողների սկզբունքային կայունությունը, միասնականությունը, պահանջների հետևողականությունը, փոխհամաձայնությունը,
- չափավոր և տեղին աջակցության ցուցաբերումը կենցաղային և ուսումնական խնդիրների լուծման մեջ, երեխայի հարցերին պատասխանելու պատրաստակամությունը,
- երեխայի դաստիարակության գործում ֆիզիկական պատժի բացառումը, հարգանքը նրա անհատականության նկատմամբ:

Ընտանիքում երեխաների ճիշտ դաստիարակության պայմաններն են՝

- ընտանեկան կոլեկտիվի համախմբումն ու ձևավորումը, ամուր կարգապահության ստեղծումը,
- չափավորությունը, ամեն ինչում չափի զգացումը,
- ծնողների սկզբունքային կայունությունը, երեխաների դաստիարակության հարցում միասնական մոտեցումն ու պահանջների միասնականությունը:

Ընտանիքում երեխայի դաստիարակության հարցում դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հարգել երեխայի անձը, պաշտպանել իրավունքները, նրա կենսագործունեության համար բնականոն պայմաններ ապահովել, հաշվի առնել նախասիրությունները, հակումները, ընդունակությունները, ճիշտ դաստիարակության համար փնտրել և ընտրել ուղիներ ու միջոցներ: Ընտանեկան դաստիարակության ընթացքում տարիքային փոփոխությունները հաճախ հաշվի չեն առնվում, շարունակվում է դաստիարակչական նույն ոճը, կիրառվում են նույն մեթոդները, ինչ մանկական տարիքում, որը լուրջ խոչընդոտներ է հարուցում դեռահասի կամ պատանու բնականոն զարգացման գործընթացում՝ հանգեցնելով ճգնաժամային նոր իրավիճակների: Ավելին, շատ ծնողներ առհասարակ իրազեկ չեն անձի տարիքային զարգացման շրջափուլերին և, բնականաբար, դաստիարակության առանձնահատկություններին: [Подласий И .П 2013, 736-796]

1.2. Ընտանեկան դաստիարակության ոճերն ու մոդելները

Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական, հավասարազոր սուբյեկտներ են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներին: Կարևոր նշանակություն ունեն ընտանիքի և դպրոցի կապը, փոխհամագործակցությունը, պահանջների միասնականությունը: Դրա համար դպրոցը մշտապես պետք է բարոյական աջակցություն ցուցաբերի ընտանեկան դաստիարակության մեթոդների ընտրության հարցում: Մանկավարժության մեջ առաջարկվում են ընտանիքի և դպրոցի համագործակցության հետևյալ ձևերը՝

1. համադպրոցական և դասարանական ծնողական ժողովները, այդ ժողովներում առանձին հարցերի քննարկումն ու դաստիարակչական թեմաներով դասախոսությունները,
2. ծնողների մանկավարժական լուսավորության կազմակերպումը՝ նրանց ներգրավելով մանկավարժական ուղղվածությամբ պարապմունքներում և ձևավորելով մանկավարժական գրագիտության ու ինքնակրթության դրդապատճառներ,
3. դպրոցի գործունեության մեջ ծնողների ակտիվ մասնակցության ապահովումը, իմացական և մարզամշակութային տարբեր միջոցառումների կազմակերպումը, բարոյագիտական թեմաներով զեկուցումների անցկացումը, հանդիպումները,
4. դպրոցի ուսումնական կաբինետների ձևավորմանն ու կահավորմանը, հաղորդումներ սովորողների խմբի առջև, ուսումնական ֆիլմերի համատեղ դիտումը և քննարկումը,
5. աշակերտական գործերի ցուցադրումների կազմակերպումը,
6. դասղեկի կապը ծնողների աշխատավայրի հետ,
7. ակտիվ փոխգործակցությունը դասղեկի հետ, ընտանիքի դաստիարակչական հնարավորությունների հաշվառումը դասղեկի աշխատանքում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության արդյունավետ ձևեր ու եղանակներ են համագործակցային, ստեղծագործական միջավայրի ստեղծման ձևերի ու միջոցների կիրառումը, դպրոցում հոգեբանական և սոցիալ-մանկավարժական ծառայության ակտիվ գործունեությունը, ընտանիքի՝ դպրոցի հետ համագործակցելու պատրաստակամության դրսևորումը, ծնողների տեղեկացվածությունը դպրոցի և դասարանի կենսագործունեության մասին, ծնողներին դպրոցական կոլեկտիվի կենսագործունեության մեջ ներգրավելու անհրաժեշտության գիտակցումը տնօրինության և ուսուցիչների կողմից: Ծնողների և

ուսուցիչների շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

- Խոսակցությունը մի սկսեք անմիջապես երե
- շտապեք լուծել պրոբլեմը:
- Հետաքրքրություն ցուցաբերեք ծնողի, նրա աշխատանք
- Քննարկեք այն հույզերը, որոնք առաջ են գալի
- պատճառով:
- Ուշադիր լսեք և ընդունեք այն, ինչ ասում է ծնո

այդպես մտածում:

- Ծնողներին հատկացրեք այնքան ժամանա
- իրավիճակում,
- Ծնողներին տեղեկացրեք անձամբ, ոչ թե երեխա

Դպրոցի և ընտանիքի համագործակցության, երեխաների և նրանց ծնողների փոխգործակցության արդյունավետությունն ապահովվում են դպրոցի կառավարմանը ծնողների ակտիվ մասնակցությամբ, ծնողական խորհրուրդներում նրանց ներգրավմամբ և մանկավարժական գիտելիքների հարստացմամբ: Միայն դպրոց-ընտանիք համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ծնողները պետք է ակտիվ մասնակցեն մանկավարժական գործընթացին՝ դաստիարակչական նպատակն ու միջոցները ընտրելուց մինչև ծրագրերի գործադրումը, որոնք պետք է հաշվի առնեն երեխաների անհատական առանձնահատկությունները: Համագործակցության ընթացքում ծնողները պետք է նկատեն ուսուցիչների թույլ տված սխալներն իրենց երեխաների դաստիարակության ընթացքում, և ուսուցիչները՝ ծնողների կազմակերպած ընտանեկան դաստիարակության ընթացքում թույլ տված սխալները: Սակայն փոխքննադատությունը պետք է լինի հիմնավորված և կառուցողական: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ուղղված է երեխաների բարոյական որակների զարգացմանը, ֆիզիկական առողջությանը, մտավոր որակներին, շրջապատի գեղագիտական ընկալմանը:

Ուսուցիչը կապեր հաստատելով ընտանիքի հետ լուծում է հետևյալ խնդիրները.

- Ճանաչում է երեխայի ընտանիքը:
- Ուսումնասիրում է սոցիալական միջավայրի ազդեցությունը երեխայի անձի վրա:
- Աշակերտների ուսուցման և դաստիարակության ընթացքում կազմակերպում է միասնական մանկավարժական գործունեություն:
- Օգնում է ծնողներին ընտանիքի պայմաններում դաստիարակել երեխային:
- Կազմակերպում է ծնողների մանկավարժական լուսավորությունը:
- Չեզոքացնում է ընտանիքի բացասական ազդեցությունը:

Այպիսով, ուսուցիչն ու ընտանիքը ամուր դաշնակիցներ են: Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքներ: [Недвецкая М.Н., Щербакова Т.Н. 2013, 252-373]

ԳԼՈՒԽ II. Ժամանակակից ընտանիքներում ծագող հիմնախնդիրները

2.1. Ընտանեկան դաստիարակության ոլորտում ծագող դժվարությունները

Մանկության ժամանակակից կարևորագույն հիմնախնդիր է, երեխաների դաստիարակության հիմնախնդիրը: Ժամանակակից աշխարհում սահմանված են դաստիարակության բազմակերպ նպատակներ, թեև դրանց միջև տարբերությունը կարող է աննշան լինել՝ մարդու առանձին որակների փոփոխությունից մինչև նրա անձի հիմնովին փոփոխություն: Սակայն հենց նպատակների այս բազմազանությունն էլ ապացուցում է

հիմնախնդրի բարդ լինելու հանգամանքը: Պարզ է, որ դաստիարակության նպատակի սահմանման վրա ազդում են մի շարք գործոններ. պետական քաղաքականությունը, ազգային գաղափարախոսությունը, որոնք իրենց հերթին կախված են այլ գործոններից. հասարակական կարգից, իշխող կուսակցությունից, հասարակության դասակարգային կազմից, հասարակական մշակույթի մակարդակից, փիլիսոփայական և մանկավարժական մտքի նվաճումներից, մանկավարժական համակարգի հնարավորություններից և այլն:

Մինչև այսօր ձևակերպված դաստիարակության նպատակի բազմաթիվ սահմանումներից, մեր կարծիքով, մարդու և դաստիարակության հզորության նկատմամբ իր հավատով, հավասարը կամ այլընտրանքը դեռևս չունի: Սակայն, ցավոք, այն ոչ հնարավոր է չափել, ոչ ստուգել, ոչ էլ գնահատել: ՈՒրեմն, չափելի, ստուգելի նպատակ է պետք սահմանել, որն իհարկե հեշտ գործ չէ:

Դաստիարակության նպատակը սահմանելու համար անհրաժեշտ է նաև պարզել և որոշել, թե ո՞րն է լինելու հայ առկա հասարակության դաստիարակության իդեալը: ՈՒ՞մ համար ենք այդ իդեալը կերտում. ամբոխի, մասսաների, թե բնակչության առանձին խմբերի համար, որոնց տրոհված է մեր հասարակությունը: Կամ, ու՞մ և ինչպիսի՞ մարդ պետք է կրթենք ու դաստիարակենք: Մարդ, որը կոմպետենտ է առանձին ոլորտներում, իր կոնկրետ մասնագիտական գործունեության մեջ և միտված է որոշակի կառույցներին ծառայելուն: Թե մարդ, որը բարձրակիրթ է, ունի անհրաժեշտ իմացային ներուժ, համապատասխանում է հասարակության զարգացման նոր նորմերին, ստեղծագործ է, իր մասնագիտության մեջ խորապես կոմպետենտ, սոցիալապես գրագետ, իր գործողությունների և արտահայտած մտքերի համար պատասխանատվություն կրելուն պատրաստ: Սրանք հարցեր են, որոնք պետք է ազգովի որոշել:

Երկրորդ հանգամանքը, որը նույնպես դժվարեցնում է դաստիարակության նպատակի սահմանումը այն է, որ ոչ ոք այսօր չի կարող ասել. առաջին դասարանցին 10-15 տարի հետո ինչպիսի հասարակության մեջ է ապրելու: Առայժմ ականատեսն ենք այն բանի, որ կրթությունն էլ է ենթարկվել շուկայի օրենքներին, արժեքից և հասարակության բարձրագույն պարտականությունը լինելուց վերածվել է սովորական ծառայության, բնութագրվում է

տնտեսական տերմինով՝ «կրթական ծառայություն»: Նման իրավիճակը առկա հասարակության անկայուն պայմաններում, երբ կորսված են հստակ կողմնորոշումները, նյութական պահանջմունքների աճը գերազանցում է հոգևոր պահանջմունքների աճին, իսկ վայրկենական հաջողության վրա հիմնված շուկայական ակտիվ գաղափարախոսությունը ներդրվում է մտավոր ոլորտ՝ կրթության գլխավոր նպատակը հռչակելով շուկային հարմարվելն ու դրա պահանջներին համապատասխանելը, չափազանց վտանգավոր է: Այս ամենը և, իհարկե, դաստիարակության նպատակը փոխելու մասին մեզանում հնչող պահանջները, մեզ բերել են այն համոզման, որ ժամանակավորապես պետք է հրաժարվել դաստիարակության ուտոպիական նպատակներից և գտնել մեր ապրած ժամանակին և դաստիարակվածության մակարդակին համահունչ պրագմատիկ նպատակներ, որոնց իրականացումը հետագայում կտանի ավելի բարձր նպատակների սահմանման: Դա չի նշանակում իջնել այսօրվա դաստիարակության մակարդակին, սա նշանակում է ճիշտ հաշվել այդ մակարդակի առկա ներուժը և դրա հիման վրա էլ մշակել դրա զարգացման հեռանկարները: Ժամանակակից դաստիարակության գլխավոր և ունիվերսալ առաջնային նպատակը կարող է լինել օգնել աճող մարդուն, սովորեցնել նրան ընտրություն կատարել: Իսկ դաստիարակության ավանդական և անկրկնելի նպատակը՝ «անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը» կարելի է ընդունել որպես վերջնական նպատակ:

Ամփոփելով վերը նշվածը, փորձենք սահմանել ուսումնական հաստատությունում դաստիարակության առաջնային նպատակը:

«Օգնել սովորողին սեփական կարծիք ունենալու, տարբեր իրավիճակներում մարդասիրական, հիմնավորված ընտրություն կատարելու, ինքնաճանաչման հիման վրա ճիշտ նպատակներ դնելու, հավասարակշռված որոշում կայացնելու և համապատասխան վարք դրսևորելու կարողություններ ձևավորելու գործում՝ անձի ինքնադրսևորման համար կրթական միջավայրի ստեղծման, անձնական և հասարակական պահանջմունքների հաշվառման, մանկավարժական գործընթացի սուբյեկտների միջև հումանիստական հարաբերությունների հաստատման ճանապարհով»:

Այս սահմանման մեջ մի քանի կարևոր խնդիր է շոշափվում, որոնք հավասարապես վերաբերում են ինչպես դաստիարակվողին, այնպես էլ դաստիարակողին: Առաջինը վերաբերում է և մեծապես կախված է դաստիարակվողից, ինքն է իրեն ձևավորողը, մեծահասակները կողքից օգնում և հեշտացնում են այդ գործընթացը: Այս դեպքում մանկավարժը և ծնողը գիտակցում են, որ իրենք երեխայի ձևավորման համահեղինակն են, հետևաբար պետք է համակերպվեն իրենց «իշխանությունը» երեխայի հետ կիսելու դերի հետ: Երկրորդը հավասարապես վերաբերում է երկուսին էլ, ցույց է տալիս երեխա-մեծահասակ համագործակցության հետևանքով նվաճված վերջնարդյունքը: Երրորդը՝ այդ նպատակին հասնելու համար հնարավորությունների ստեղծումը, որի պատասխանատուն թեև դաստիարակողն է, /պայմանների ստեղծումը/, սակայն վերջնական արդյունքին հասնելու ճանապարհի բնույթն ու ուղիների որոշումը կատարվում է դաստիարակվողի և դաստիարակողի փոխադարձ համաձայնությամբ ու ընտրությամբ: Կարծում ենք այս տարբերակը չափելի է, կարծես թե հնարավորություն է տալիս պահպանել նպատակների հաջորդականությունը, հենվել ազգային դաստիարակության ավանդույթների վրա և զարգացնել համակարգը անձի և հասարակության առջև կանգնած նոր նպատակների և արժեքների համաձայն:

Մանկության առկա հաջորդ հիմնախնդիրը անձի և նրա միջավայրի ամբողջականությունն ապահովելու խնդիրն է: Շատ մանկավարժներ շարունակում են ճակատագրական սխալ թույլ տալ, շարունակելով կարծել, որ օնտոգենեզի ստեղծման փուլերը (մանկություն) հասուն տարիքին նախապատրաստվելու փուլեր են, մանկությունը ապագա կյանքին նախապատրաստվելու ժամանակավոր հատված է, հաշվի չի առնվում երեխայի ինքնատիպությունը: Փաստորեն մանկությունը դառնում է հասուն տարիքի զոհը: Այս հանգամանքը լրջորեն ազդում է երեխաների սոցիալական հարմարման, մոտիվացիաների, պահանջմունքների, կյանքի լիարժեքության զգացողության, սովորելու ընդունակության վրա:

Այս ամենը նոր մոտեցումներ են թելադրում ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ, բնական գիտությունների հիմնարար վերջին հայտնագործությունների հիման վրա պահանջում են ստեղծել դպրոցի նոր մոդել: Որպես այլընտրանքային նոր մոդել է

առաջարկվում հոլլիստական «ամբողջական դպրոցի» մոդելը, որի գլխավոր նպատակը լայն հաղորդակցման ոգով, մտավորական, ինքն իր, բնության և ուրիշների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ունեցող, զարգացած, ազատ և դրական կողմնորոշում ունեցող անձի դաստիարակությունն է: [Чистяков В.В. Безух К.Е. 2014, 259]

Նման մոդելը, մեր կարծիքով, ապագա ունի, թեև հնչում են ձայներ, թե ուր եք նայում, ինչու եք այդքան առաջ վազում, ժամանակը կգա, կտեսնենք ինչ մոդել է մեզ հարմար: Սակայն երիտասարդության սոցիալիզացիայի տարբեր ցուցիչներ ցույց են տալիս, որ հասարակության կայունությունը չվտանգելու համար անհրաժեշտ է շտապել և մեր մենտալիտետին, արժեքներին, ավանդույթներին ներդաշնակ ընտրություն և որոշումներ ընդունել: Մյուս կողմից՝ իհարկե, դպրոցական սոցիալիզացիայի գործընթացները չի կարելի դիտարկել հետինդուստրիալ հասարակության սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրներից անջատ: Կարծում ենք, անհրաժեշտություն կա մոտ ապագայում այս գաղափարները դնել լայն քննարկման:

2.2. ՏՀՏ-ների ազդեցությունը, երեխաների անձի ձևավորման վրա.

Հետազոտական աշխատանք ՏՀՏ-ների դրական և բացասական ազդեցության վերաբերյալ

Բոլորս տեսնում ենք, որ աշխարհը գնում է նրան, որ կրթությունը բոլորի համար և ողջ կյանքում ապահովի արդար, հավասար հնարավորություններ, ներառականություն, կրթության և ուսուցման որակ՝ ի շահ կայուն զարգացման ու առանց բռնության միջավայրի ձևավորման: Թվային տեխնոլոգիաների տարածմամբ կրթությունը ստացավ շարունակական, անհատակողմնորոշիչ, ճկուն և դինամիկ ձև: Այսօր պետությունների առջև դրված է որակյալ կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար հասնելի դարձնելու կարևորագույն խնդիրը: Այդ նպատակով փորձ է արվում ՏՀՏ-ն օգտագործել կրթության տարբեր բնագավառներում և բոլոր մակարդակներում: Ընդունելով այն հանգամանքը, որ.

- կրթությունը պետք է հիմնվի ամենաարդիական տեխնոլոգիաների վրա,
- ՏՀՏ-ն կրթության որակը բարձրացնելու հզոր ներուժ ունի,
- անկասկած պետք է այն հասանելի լինի յուրաքանչյուր երեխայի համար:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ թվային հասարակությունում ծնվել է մի նոր սերունդ, ով պետք է ոչ միայն տիրապետի ՏՀՏ-ի ստեղծած նոր գիտելիքներին, հասկացություններին, կոմպետենցիաներին, այլև պետք է իմանա դրանցից կախված լինելու վտանգների և հետևանքների մասին:

Բոլորիս համար պարզ է, որ համակարգչային խաղերով տարվելը երեխայի մոտ առաջացնում են «կլիպային մտածողություն և էկրանային կախվածություն», որոնք զրկում են երեխային որևէ մեկ այլ գործով երկարատև զբաղվելու ունակությունից, նրան դարձնում են գերակտիվ, ցրված: Նման երեխաները կարիք ունեն մշտական ներքին խթանման, որը նրանք սովորաբար ստանում են էկրանից: Մասնագետները պնդում են, որ այդ երեխաները դժվարանում են ընկալել բանավոր խոսքը, դժվարանում են կարդալ, հասցնում են ընկալել միայն առանձին բառեր կամ կարճ նախադասություններ, հետևաբար՝ ամբողջությամբ չեն հասկանում տեքստը: Արդյունքում՝ ձևավորվում է կլիպային մտածողություն, երեխան ըմբռնում է բազմատեսակ, կցկտուր տեղեկատվության միայն առանձին դրվագներ, խաթարվում է նրա մտածելու գործընթացը, նվազում է նրա ստեղծագործական ներուժը, համեմատելու, վերլուծելու կարողությունը: [ЮНЕСКО 2013, 77-78] Այսինքն, հրատապ և պարտադիր են մնում ՏՀՏ-ից մանկության կախվածության, երեխայի զարգացման, սոցիալականացման, ձևավորման վրա դրա ազդեցության, մանկավարժության և ՏՀՏ-ի ինտեգրման ձևերի և չափերի, թվային հասարակության արժեքների, այդ ոլորտում դպրոց-ընտանիք համագործակցության ուղիների ուսումնասիրման հիմնախնդիրները և դրանց լուծման եղանակների որոշումը:

Ես զրուցեցի երկու ընտանիքների հետ հասկանալու համար, թե ինչ են մտածում նրանք, երեխաների դաստիարակության վրա ՏՀՏ-ների ազդեցության վերաբերյալ: Հարցերը հետևյալն էին ՝

1. Ո՞րն է ՏՀՏ-ների դրական ազդեցությունը կրթության և երեխաների դաստիարակության վրա:

2. Ո՞րն է ՏՀՏ-ների բացասական ազդեցությունը կրթության և երեխաների դաստիարակության վրա:
3. Մեր օրերում հնարավո՞ր է խուսափել ՏՀՏ-ների միջնորդությունից: Կցանկանայի՞ք հրաժարվել ՏՀՏ-ների առկայությունից:

Ընտանիք 1: Առաջին ընտանիքի հետ զրույցի ժամանակ մեր հարցերին պատասխանեց ընտանիքի մայրը: Որպես ՏՀՏ-ների դրական ազդեցություն նա նշեց, որ քանզի մենք ապրում ենք տեխնիկապես բավականին արագ զարգացող դարաշրջանում, գովելի է, որ երեխաները կարողանում են տիրապետել տեխնիկային և օգտվել տարբեր որոնողական կայքերից: Այս երևույթներն էլ իրենց հերթին օգնում են երեխային ցանկացած վայրում, ցանկացած ժամի և ցանկացած պայմաններում ունենալ ինֆորմացիա յուրաքանչյուր երևույթի վերաբերյալ և քանի որ, նրանք անձամբ են փնտրում և պրպտում այդ ինֆորմացիան, այն ավելի հեշտ է մտապահվում և մնայուն է լինում: Ճիշտ է, համացանցը անսահման ինֆորմացիա կարող է տալ երեխային ինչպես օգտակար, այդպես էլ բացասական, բայց այս դեպքում մեզ միայն կօգնի երեխայի հանդեպ հետևողական լինելը, որպեսզի պաշտպանենք նրանց համացանցի մութ անկյուններից: Որպես բացասական կողմ նա ասաց, որ չնայած դրական կողմերի առկայությանը, այնուամենայնիվ տեխնիկայից և համացանցից երկար ժամանակ օգտվելը առաջացնում է կախվածություն, որը երեխաներին խանգարում է կենտրոնանալ կրթության վրա, զարգանալ տարբեր ուղղություններով և ունենալ տարբեր հետաքրքրություններ: Այն հարցին թե կարելի՞ է մեր օրերում խուսափել ՏՀՏ-ների հետ առընչությունից, նա պատասխանեց, որ ոչ, քանի որ մենք ապրում ենք օրեցօր զարգացող աշխարհում և պետք է քայլենք ժամանակին համընթաց, հակառակ դեպքում մենք կմնանք անցյալի ճիրաններում և ինքներս մեզ զրկենք առաջընթաց ապրելու և զարգանալու հնարավորությունից: Նա նաև ասաց, որ արդեն հնարավոր չէ առանց ՏՀՏ-ների կիրառության և չէր ցանկանա, որպեսզի ամբողջովին հրաժարվեինք դրա առկայությունից:

Ընտանիք 2: Երկրորդ ընտանիքի ծնողները կարծում են, որ եթե մենք չապրեինք նման տեխնոլոգիապես զարգացած ժամանակներում, համաճարակը մեծ բաց կստեղծեր կրթության ոլորտում, բայց քանի որ ունեինք հնարավորություն դասերը կազմակերպելու

հեռավար տարբերակով, մենք չկանգնեցինք նման խնդիրի առաջ: Նաև այն ծնողները ովքեր չէին տիրապետում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին, առիթ ստեղծվեց, որպեսզի այս ոլորտում նրանք նույնպես տարրական գիտելիքներ ձեռք բերեն: Սակայն այս ընտանիքի ծնողները կարծում են, որ ինչքան էլ ՏՀՏ-ները օգնեցին այս իրավիճակում այն նաև իր բացասական հետևանքները թողեց երեխաների առողջության վրա, մասնավորապես՝ տեսողության, նյարդային համակարգի և հենաշարժիչ համակարգի վրա: Այս ընտանիքում նույնպես չեն պատկերացնում մեր առօրյան առանց ՏՀՏ-ների և նաև չեն ցանկանում հրաժարվել դրանց առկայությունից, քանի որ այն բավականին հեշտացնում է մեր կյանքը, չնայած իրենից բխող տարատեսակ խնդիրների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով տվյալ թեմայի շուրջ կարող ենք ասել, որ

- չնայած տարատեսակ խնդիրների, մենք չենք կարող ապրել մեր օրերում, խուսափելով
- նորագույն տեխնոլոգիաներից և ժամանակակից մեթոդներից,
- ժամանակակից տեխնոլոգիաները և նոր սերնդի փոփոխությունները, կարող են
- ինչպես օգտակար լինել ընտանիքի և երեխայի դաստիարակության համար, այդպես
- էլ խանգարել այս երկու ինստիտուտների բնականոն աշխատաքին,
- մեզանից պահանջվում է քայլել ժամանակին համահունչ, որպեսզի կարողանանք
- հասցնել ապրել կյանքի հունով, սակայն պետք է չմոռանալ, որ չի կարելի
- գայթակղությանը տրվել և մոռանալ մեզ վաղուց հայտնի «ավանդական» մեթոդները,
- մենք պետք է կարողանանք համատեղել արդեն երկար տարիների փորձ ունեցող
- դաստիարակության մեթոդները, ժամանակակից մարտահրավերների,
- տեխնոլոգիաների և ստանդարտների հետ,
- մենք պետք է կարողանանք պատվով դուրս գալ այս խառնաշփոթից առանց լուրջ «տրավմաների», որպեսզի կարողանանք դաստիարակել արժանի սերունդ, ովքեր տասը տարի անց կկարողանան միայն բարելավել կյանքի որակը և հնարավորությունները,

Աշխատանքս ուզում եմ ավարտել ռուս մանկական գրող Միխալկովի խոսքերով. «Ամեն ինչ

սկսվում է մանկությունից, որտեղ ցանվում են բարու սերմերը: Սակայն տարիներ անց միայն հայտնի կլինի բարու սերմերն են հաղթել, թե չարության մոլախոտն է դրանց ոչնչացրել: Մեզնից յուրաքանչյուրի խնդիրն է օգնել աճելու բարու սերմերին»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Информационные коммуникационные технологии в образовании, ЮНЕСКО, 2013
2. Недвецкая М.Н., Щербакова Т.Н. и другие ''Педагогика краткий курс''
3. Педагогика" краткий курс, изд. ''Окей книга'', 2014
4. Подласий И .П. ''Педагогика'' ,Т 1, М., 2013
5. Самыгин С. И., Столяренко Л.Д., ''Психология и Педагогика'', М. 2012 ст. 440-443
6. Чистяков В.В. Безух К.Е. Основы педагогической и социальной антропологий, Ростов на-Дону, Феникс, 2014.
7. Գեղամյան Մ., «Դաստիարակության խնդիրներն այսօր» // https://avedisianschool.am / 10.05.2021; 19:45
8. Գյուլամիյան Ջ.Հ. - «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 21-րդ դարի մարտահրավերները.կանխման և հաղթահարման ուղիները» (գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան 2016 // http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf / 11.05.2021; 09:30